ծանելու մտա են։ Ամենքը կրցածնուն չափ կը պոռան, մէկզմէկ մղելով կ'արգելուն. սակայն վերջապէս կ'անցնին, կ'ապահովնան, և շուտ մը գաղթողաց սայլերը բոլոր փողոցներուն մէջ կը ցըրուին։ Իսրայելացւոց եկեղը կը նմանի։ Սակայն Բարիզ որչափ տխուր է աւետեաց երկիր մը ըլլալու։

« Եւ արդ երկուստեք սկսեցէք շառաչելու հրեաք և հրացանք, վասն զի հարկ է որ մէկ կողման ջնջուելովը այդ զարհուրելի կռիւը լմննայ։ Հապա, սպանեցէք, մի և նոյն երկնից ներքև ծնած պատերազմողք, որովհետև անհրաժեշտ այդ բանը կ'ուզէք. գոնէ մէկ քանի կանայք այս գիշերը խաղաղ պիտոր հանգչին »։

Այս ահաւոր պատկերին ուրիշ քըստմընելի դէպք մըն ալ այս է։ « Դէռնի ճամբէ մեռելի մը յուղարկաւորութիւնը կ'անցնէր։ Դագաղը շատ պզտիկ էր և երկու հոգի մէյմէկ ծայրէն բռնած կը վերցնէին. տղու մը դագաղն էր։ Եռևէն պլուզով գործաւոր մը կը քալէր, անտարակոյս հայրը, և մէկ քանի բարեկամք։ Շատ տըխուր տեսարան էր, բայց պատահածը քստմնելի բան մըն է։ Մոն Վալէռիէնէ եկող ռումբ մը յանկարծ պզտի դամբանական արկղին վրան կ'իյնայ, և ճաթելով, տախտակի, ոսկերց ու մսի կտորներ հօրը երեսը կը նետէ։ Մի և նոյն ատեն թէ դիակը և թէ արկղը փշուր փշուր մանրուեր էին։ Մահը ջարդել։ Հարկ է խոստովանիլ որ ռմբաձիգք ճարտար և յետին աստիճանի կիրթ ապականիչ են »։

ՄՈՒՐԻԼԵՕ, ԵՒ ԻՐ ՏԻՐԱՄՕՐ ՆԿԱՐԸ

(Տես երես 328–329։)

Բարթուղիմէոս Ստեփանոս Մուրիլեօ ծնաւ 'ի Սիւիլիա 1618 տարւոյն առջի օրը, և կոչուեցաւ 'ի բնութենէ Սպանիոյ առաջին նկարիչն ըլլալու։ Կրնամք ըսել որ իրեն նախնական կըրթութիւն տուողն Իտալիան եղաւ, վասն զի Յովհաննէս Դասդիլեօ իր ուսուցիչն՝ Փլորենտեան դպրոցէն սորվեցաւ նկարչութիւնը։ Եթէ Մուրիլեօ անոր աշակերտած ալ չըլլար, դարձեալ միշտ իրեն առջի կրթութիւն տուողն Իտալիան կրնայ համարուիլ. վասն զի իր բնակած երկիրն արդէն իսկ նախ Իտալիա փայլող արուեստից լուսէն լուսաւորուած էր, այնու որ մեծահամբաւ նկարիչք, ընդ որս Դիցիանոս, Սպանիա երթալով հոն անմահական գործեր 'ի լոյս ընծայեցին։

Բայց ոչ միշտ արհեստի մը մէկ տեսակ գաղափարական օրինակի ընտրութիւնը 'ի նմանութիւն՝ աղէկ է. վասն զի նոյն իսկ Իտալիա ամեն տեսակի կատարեալ նկարներ 'ի լոյս ընծայած չէ։ Մուրիլեօյի ուսուցիչն թէպէտ կըրիճ 'ի նկարչութեան, բայց պակասաւոր էր գունոց նկատմամբ, և իր աշակերտն եթէ յամենայնի նմաներ իրեն, այդչափ մեծանուն և համբաւաւոր չէր հանդիսանար։ Ուստի երբ իր ուսուցիչն մեկնեցաւ Սիւիլիայէն, Մուրիլեօ թողուց նկարչութեան այդ ոճը, և սկըսաւ ըստ իրեն ախորժանաց գոյն տալ նկարուց, մերթ այս և մերթ այն նկարիչն իրեն օրինակ առնելով։ Գեղեցիկ արուեստից պատմութեան մէջ ինքն միայն չեղաւ, որ նախ քան կատարելութեան հասնելու՝ այլ և այլ ճամբաներ փորձած, քայլ առ քայլ յառաջացած, և զանազան նկարիչներ իրեն օգնական առած ըլլայ, վերջապէս 'ի բնութենէ ծածուկ իրեն համար սահմանած կէտն հասնելու համար։ Նոյն իսկ Ռափայէլ՝ զԼէոնարտոս տա Վինչին զՄիքէլանճելն և զուրիշներն իրեն օրինակ առած է. բայց միշտ իտալական դպրոցի մէջ կենալով, ինչու որ նոյն ատեն Իտալիայէն դուրս արժանաւոր սորվելու բան չըկար, Իտալիան միայն ըլլալով ազգաց ուսուցիչն։

Բայց Մուրիլեօյի ժամանակը նոյնպէս չէր, այլ արուեստներն ամեն կողմ տարածուած էին, և նոյն իսկ Ֆիլանտրայի մէջ երևելի հանճարներ կը փայլէին։ Թէպէտ այս այսպէս էր, բայց Մուրի-

լեռ ներքին յայտնութեամբ մը կ'իմանար որ արուեստից կեդրոնն ու աթոռն Իտալիա է, և թէ չի կրնար հանիլ կատարելութեան, առանց այց ելանելու Ռափայէլի, Դիցիանու և Միքելանճելոյի հայրենեաց, և առանց իրենց գործերն տեսնելու և ինքը զինքը հրահանգելու անոնցմով՝ այն երկնից տակ, որ այն անմահական հանճարից ծնանիլն տեսաւ, այն գեղեցիկ երկրին մէջ՝ որ ներշնչեց և հրահանգեց զանոնք իր բնութեան հիանալի տեսարաններովն։

Ուստի միտքը դրաւ Մուրիլեռ Իտալիա ճամբորդութեան ելլելու, և Սիւիլիայէն ճամբայ ելաւ դէպ 'ի Հռովմ. բայց Մատրիտ հասնելով, և ծանօթութիւն ստանալով մեծահամբաւ նկարչին Վէլազգուէզին հետ, փոխեց միտքը։ Վէլազգուէզ որուն մեծ հանճարոյն հետ վիճակած էր 'ի բնութենէ և մեծ բարութիւն սրտի, տեսնելով Մուրիլեռի հանճարը ոչ միայն չնախանձեցաւ, այլ մանաւանդ անկեղծ եռանդեամբ մը վառուած, այնպիսի ճամբու մը մէջ դրաւ զանիկա, յորում կարենայ իր արուեստը կատարելագործել։ Վէլազգուէզ հայրենասէր և թերևս ոչ այնչափ հաւանեալ հռովմէական դպրոցին ոճոյն, և հաւանաբար փառասէր իւր սկզբամբն և ոճովն կատարելագործելու Մուրիլեռի արուեստն, համոզեց զինքն Սպանիա մնալու, ըսելով թէ կրնայ հոն ալ ինքը զինքը հրահանգելու՝ Դիցիանու, Վերոնացւոյն, Ռուպէնսի և Վան-Տիքի գործոց վրայ։ Մուրիլեռ բնութեամբ ուրիշին խորհրդոցը և բանիցը դիւրամէտ, Վէլազգուէզի կամացը յարմարեցաւ, և զինքն իրեն ուսուցիչ ընտրեց, և երեք տարի հետը վաստակեցաւ. ու քիչ ժամանակուան մէջ իր զարմանալի հանճարը փայլեցուց։ Բայց սկզբան իր քաշած քանի մը նկարուց մէջ աւելի Վէլազգուէզի հոգին և ոճը քան թէ Մուրիլեռի բնական հանճարը կը տեսնուէին։ Բայց քիչ ատենի մէջ իր նկարուց այնպիսի ինքնագիւտ սեփականութիւն մը (Originalité) տուաւ, որով զանազանեցաւ ամեն ժամանակի և ամեն տեղւոյ նկարիչներէն։

Իր զլուխ գործոց նկարներէն մէկն է Տիրամայրը, զոր և ներկայացուցած եմք ընթերցողին ամսաթերթիս, որոյ վերայ ամենայն ոք կը տեսնայ զգացումմը, աղնուականութիւն և բնականութիւն, որոնք նկարչին եղական հանճարոյն ապացոյցք են. զոր և կրնամք հաստատել դիտելով Տերամօր կեցուածքը, նայուածքը, դիմաց փափկութիւնը, աղնուականութիւնը, և Յիսուսին ախորժելի մանկական ծիծաղը։

Մուրիլեռի ուրիշ գլխաւոր և զարմանաց արժանի գործերն, զորս 'ի լոյս ընծայեց 10 տարուան մէջ, (1670էն մինչև 1680), են՝ Յիսուս Զիրեանաց շերամ վրայ. Յիսուս սեւաև կապուտաչ, և մասնաւոր յիշատակութեան արժանի է Ամառուռանանոյ Յղուրիւնը, որ 600,000 լիւայի ծախուեցաւ։

Մուրիլեռ Գատիչէ երթալով, եկեղեցւոյ մը մեծ խորանին համար Սրբոյ Բոնաւենտոյի Կատարիանէ Ալեքսանդրացւոյն խորհրդական ամուսնութիւնը նկարելու համար, դժբախտաբար բարձր տեղէ մը վար ընկաւ, և վերը մ'ունեցաւ կողին վրայ. և թերևս սաստիկ ամթէն չուղելով յայտնել բժշկին այս վերքը, սաստիկ ցաւ և տանջանք և վերջապէս մահ պատճառեց 64 տարուան հասակին մէջ։

Մուրիլեռ՝ Սպանիոյ Ռափայէլ ըսուած է. և իրաւամբ է եթէ բաղդատենք զինքը թերակղզւոյն ուրիշ նկարչաց հետ. վասն զի այնպիսի յատկութիւններ կը նշմարենք իր նկարուց մէջ, որոնք բաւական են զինքը մեծանուն նկարչաց կարգն դասելու։ Ռափայէլի շատ նմանութիւն ունէր բարուց քաղցրութեամբ և գեղարուեստից յառաջադիմութեան սիրովն. որոյ 'ի նշան Սիւիլիոյ մէջ նկարչութեան փառաւոր ճեմարան մը հաստատեց, 'ի խրախոյս համբակաց, ուր մինչև ցայսօր դովասանք կը յիշեն Մուրիլեռի անունը։